„ Այլ ոչ միայն անձնամոռաց գտա-
„ նի նա առ 'ի ձագուցն պահպանու-
„ թիւն, այլ և յամենայն 'ի վտանգս
„ դիմագրաւ 'ի նոցին պաշտպանու-
„ թիւն։ Այնթէ յանկարծ բազէ ընդ
„ օդս երևեսցի, և ահա մայրն այն
„ երկչոտ և ապիկար, և 'ի փախուստ
„ պատրաստական 'ի բնէ, առ սէր
„ որդւոցն պնդի քաջութեամբ, խոյա-
„ նայ հանդէպ ահագին ճապռացն,
„ և 'ի սուիչ և 'ի կառաչ և թևոցն
„ բաբախմամբ ահ արկանէ գիշա-
„ խանձ որսողին. որոյ պարտեալ յան-
„ կարծելի ոսոխէն՝ մեկնեալ 'ի բաց
„ հեռանայ, այլումիմիք ակն եդեալ
„ որսոյ դիւրագիւտի։ Ասուի իսկ ե-
„ թէ լիով ունի հաւ զամենայն հան-
„ գամանս զբարեմոյն առաքինութիւն.
„ այլ գոգ ստգիւտ իմն առաւելա-
„ զանց սիրոյ նորա և բնութեանն այն
„ իցէ, զի եթէ երբէք ուրեք 'ի թու-
„ խրս ոք տացէ նմա զձուս հաւուց
„ ջրասիրաց, նա զնոյն ինամն զոր առ
„ իւր հարազատսն ցուցանէր՝ ոչ ար-
„ գելու և յօտարաց անտի, այլ որ-
„ պէս մայր քան թէ դայեակ դար-
„ մանէ և յանձանձէ զնոսին։ Այս յոր-
„ ժամ՝ 'ի բնութեանն ազդմանէ բե-
„ ռեալք՝ 'ի գետ ուրեք դիմեն նոքա
„ անկանել, և 'ի լոյղ զբօսանել, անդ
„ է տեսանել զեղկելի դայեկին զվա-
„ ռանն և զտագնապ և զանհնարին
„ անձկութիւն սրտի, զի տակաւին
„ ևս մայր զանձն համարի. փութայ
„ ճեպի խառնել 'ի ջուր անդր զկնի
„ նոցա, այլ յետս ընկրկեալ յանդ-
„ գել տարերաց լուծական բնու-
„ թեանն՝ յածի կոծի և թափառեալ
„ շրջի զգետափամբն, և զդողանի
„ հարեալ յուսակտուր խուճապի.
„ զի տեսանէ զձագսն 'ի մօտալուտ
„ վտանգին, և ձեռն տալ և օգնել
„ մատաղերամ որդեկացն ոչ ունի „։

Մոտեր։

Մանաւանդ ըստուած թանձրամորթ կենդանին իրեն ներքին և արտաքին կազմուածքին կողմանէ խոզին շատ նման է, միայն ոտքերն ու ականները խոզինէն տարբեր են. վասն զի ասոր կնճիթը ոչ միայն շարժուն է, հապա նաև կ'երկրննայ ու կը կարձրնայ, և կրնայ անով գետնէն բան վերցրնել. ուստի պատճառոր կենդանիներուն կարգէն ալ կրնայ սեպուիլ։

Սովորաբար գիշերները դուրս կ'ելլէ. և իրեն քալուածքը ցատքրտելով է, ու պէտք եղած ատեն շուտ շուտ ալ կը վազէ. ջրի մէջ խիստ աղէկ կը լողայ, և երբոր մէկը ետևէն իյնայ՝ ջուրը կը նետուի. շատ անգամ ինքիրմէ ալ կը մտնէ լողալու համար։ Կերակուրը պտուղ և կակուղ տերև է. ուրիշ կենդանիներուն չփնասեր. և թէպէտ վրան յարձակին՝ ինքզինքը չպաշտպաներ՝ թէ որ իրեն փախչելու ճամբան արգիլուած չըլլայ։ Ինքը գիշեր ատեն կը փալփըլի. ականջները հաստ են, վիզը խոզինէն աւելի երկայն, և ձայնը թեթև սուլելու պէս ձայն մը ն է. թէ որ պզտիկուց բրնուի դիւրաւ՝ կ'ընտանենայ։

Ի կենդանին մէկ տեսակ միայն կը կարծուէր, այսինքն հարաւային Ամերիկայի մէջ գտնուածը։ Պլիֆոն և իրեն հետևողները տեսնելով որ աս կենդանին իրենց ատենը հոն միայն կը գտնուէր, ըսին թէ հարաւային Ամերիկայի մէջ գտնուած կենդանիները՝ Ասիայի Աֆրիկէի ու Եւրոպայի մէջ չեն գտնուիր. կամ թէ հին ցամաք երկրին կենդանիները թէպէտ և անոնցմէ սերուած ըլլան, բայց այնչափ փոխուած են՝ որ իրարու ամենևին նմանութիւն չունին։ Այս սակայն հիմա ստուգուած է որ Ամերիկայի թափիրէն զատ կը գտնուի նաև Ասիայի մէջ Մալաքքա թերակղզին և Սումատրա կղզին։ Այս մեր պատկերքին մէջինն ալ Ասիայի տեսակէն է,



Թափիր ։

որուն մարմինը արեւելեան Հնդկաստանի անգղիական ընկերութեան Թանգարանին մէջ պահուած է ։

Գաղղիայի Լանկըտոք գաւառին մէջ՝ գետնին տակէն գտնուեցան այնպիսի ոսկորներ որ հիմակուան Թափիրին ոսկորներուն շատ նման են ։ Նոյնպէս ալ Գաղղիայի Սեննա քաղաքին մօտիկ գետնին տակէն գտնուած են այնպիսի ակռաներ որ հիմակուան Թափիրին ակռաներուն նման են, բայց աւելի խոշոր ։ Գիւվիէ ան ակռաներուն նայելով՝ կ'ըսէ թէ կենդանւոյն մարմինը մեծ ռնգեղջիւրի մը չորսին չափ խոշոր եղած պիտի ըլլայ ։

Ամերիկայէն բերուած առջի ողջ Թափիրը մեռած է 1828ին Լոնտրայի մէջ կենդանաբանից ընկերութեան պարտէզը ։ Նոյն ընկերութիւնը 1835ին ուրիշ մըն ալ ունէր ։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Խօսակցութիւն հարստութեան վրայ ։

ԴԱՍՏԻԱՐԱԿ. — Ըսէ տեսնեմ, մարդըս ըստ աշխարհի ալ երջանիկ ըլլալու համար ինչ պէտք է ունենայ ։

ԱՇԱԿԵՐՏ. — Մաքուր խղճմտանք, լաւ առողջութիւն, և բաւական հա-